**19.11.2026թ** *Էթիկայի Կոմիտեի N 3 նիստի*

## ՕՐԱԿԱՐԳ

1) ԵՊԲՀ Ընդհանուր և ինվազիվ սրտաբանության և ներքին հիվանդությունների կլինիկայի ղեկավար, գլխավոր հետազոտողի թեկնածու՝ պրոֆ. Համայակ Սիսակյանի և «Միքայելյան ՎԻ» Սրտաբանական կլինիկայի ղեկավար՝ Անդրանիկ Մշեցյանի համակարգմամբ «Ուղեցույցներով սահմանված բժշկական թերապիա՝ կիրառված ֆիքսված դեղաչափերով համակցման ռազմավարությամբ, ընդդեմ սովորական խնամքի՝ սրտային անբավարարության դեպքում» թեմայով, Սերվիե միջազգային հետազոտական ինստիտուտ (I.R.IS.) 22, route 128 – 91190 Gif-sur-Yvette – Ֆրանսիա, *կլինիկական հետազոտության* քննարկում:

2) ԵՊԲՀ «Մուրացան» ՀՀ-ի էնդոկրինոլոգիայի կլինիկայի ղեկավար՝ Ելենա Մ. Աղաջանովայի և «Հերացի 1» ՀՀ-ի էնդոկրինոլոգիական ծառայության ղեկավար Նաիրա Վ. Գոգյանի «Ռանդոմիզացված, կրկնակի կույր, բազմակենտրոն, պլացեբո-վերահսկվող, 3-րդ փուլի, գերազանցությունը հաստատող հետազոտություն՝ Վիտամին D-ի անբավարարություն ունեցող մասնակիցների մոտ կալցիֆեդիոլով բուժման արդյունավետությունը ուսումնասիրելու համար (CALVID)» թեմայով, Բեռլին-Քեմի ԱԳ, *կլինիկական հետազոտության* քննարկում:

3) Գլխավոր հետազոտող՝ բ.գ.դ., պրոֆ. Պարունակ Հարությունի Զելվեյանի կողմից իրականացվող «Բազկային զարկերակային ճնշման չափման «OMRON EVOLV BP7000» սարքի կլինիկական վավերացում հղիության և նախաէկլամպսիայի վիճակներում՝ համաձայն «Բժշկական սարքավորումների կատարելագործման ասոցիացիայի, Զարկերակային գերճնշման եվրոպական միության, Ստանդարտացման միջազգային կազմակերպության զարկերակային ճնշման չափման սարքերի վավերացման համընդհանուր 81060-2:2018 արձանագրության և դրա թիվ 1 (2020) և թիվ 2 (2024) լրացումների» վերնագրով <u>հետազոտության</u> քննարկում:

Գրախոս՝ բ.գ.դ. Լ. Հազարապետյան

4) «Իմունաուռուցքաբանության գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի հետազոտողներ՝ ուռուցքաբան Բենիկ Ռոբերտի Մխիթարյանի, ուռուցքաբան, քիմիաթերապևտ Սամվել Գևորգի Բարդախչյանի և «Միքայելյան» համալսարանական հիվանդանոցի քիմիաթերապիայի բաժնի վարիչ՝ Լիլիթ Արմենի Հարությունյանի «Կրծքագեղձի վաղ և տեղային տարածուն քաղցկեղի ժամանակ նախնական ՀՇ փուլավորման ախտորոշիչ արժեքի և կեղծ-դրական արդյունքների պրոսպեկտիվ գնահատում» <u>հետազոտական աշխատանքի</u> քննարկում:

Գրախոս՝ պրոֆ. Գ. Ն.Թամամյան

5) Օստեոպորոզի կենտրոնի տնօրեն Վարտա Նորայրի Բաբալյանի կողմից իրականացվող «Հայաստանում կոտրվածքների կանխարգելման ծառայության (ԿԿԾ) արդյունավետության և գործնականության գնահատում» թեմայով *հետազոտական աշխատանքի* քննարկում:
Գրախոս՝ պրոֆ. Ա. Կ. Հայրապետյան

6) ԵՊԲՀ հայցորդ, մանկաբարձ-գինեկոլոգ՝ Աննա Արսենի Մարկոսյանի «Մակերիկամների կեղևի բնածին հիպերպլազիայի ոչ դասական ձև. գենետիկական հիմքեր, ախտորոշման և բուժման անհատականացված մոտեցումներ, սոմատիկ ու վերարտադրողական առողջության գնահատում» բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության **պլան-անոտացիայի** քննարկում:
Գիտական ղեկավար՝ պրոֆ. Ա.Գ. Հարությունյան
Գրախոս՝ դոց. Ն.Բ. Շահվերդյան

7) ԵՊԲՀ դեղերի տեխնոլոգիայի ամբիոնի դասախոս Սեդա Ֆելիքսի Մխիթարյանի և համահեղինակների կողմից իրականացվող "Synthesis and Preliminary Biological Evaluation of Two Thiol-Containing 1,2,4-Triazoles" հոդվածի քննարկում:
Գրախոս՝ դոց. Լ. Ս. Բալյան